

Խ-298-26.09.2019, 11.11.2019-SՀ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԱԳՐՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2016 թվականի հոկտեմբերի 4-ի հարկային օրենսգրքի (այսուհետ՝ «Օրենսգրք») 108-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել նոր 21-րդ կետով.

«21) բանկերի կամ վարկային կազմակերպությունների ստացած գումարները, որոնք բանկերը կամ վարկային կազմակերպություններն ստացել են որպես ապահովագրական հատուցում, որոնց մասով բանկը կամ վարկային կազմակերպությունը հանդիսանում է շահառու՝ այն մասով, որ մասով այդ գումարները ապահովագրության պայմանագրի համաձայն՝ բանկերի կամ վարկային կազմակերպությունների կողմից տրամադրվում են վարկառու կամ գրավատու ֆիզիկական և իրավաբանական անձանց կամ ուղղվում են վարկառու ֆիզիկական և իրավաբանական անձանց վարկի մարմանը:»:

Հոդված 2. Օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել նոր 16-րդ կետով.

«16) բանկերի կամ վարկային կազմակերպությունների վճարած գումարները, որոնք բանկերը կամ վարկային կազմակերպություններն ստացել են որպես ապահովագրական հատուցում, որոնց մասով բանկը կամ վարկային կազմակերպությունը հանդիսանում է շահառու՝ այն մասով, որ մասով այդ գումարները ապահովագրության պայմանագրի համաձայն՝ բանկերի կամ վարկային կազմակերպությունների կողմից տրամադրվում են վարկառու կամ գրավատու ֆիզիկական և իրավաբանական անձանց կամ ուղղվում են վարկառու ֆիզիկական և իրավաբանական անձանց վարկի մարմանը:»:

Հոդված 3. Օրենսգրքի 124-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ.

«Հոդված 124. Բանկերի, վարկային կազմակերպությունների, ապահովագրական ընկերությունների և արժեթղթերի շուկայի մասնագիտացված անձանց հարկման բազայի որոշման նպատակով համախառն եկամտից կատարվող այլ նվազեցումները

1. Ռեզիդենտ կազմակերպություն համարվող բանկերի, վարկային կազմակերպությունների, ապահովագրական ընկերությունների և արժեթղթերի շուկայի մասնագիտացված անձանց հարկման բազայի որոշման նպատակով համախառն եկամտից նվազեցվում են նաև կառավարության լիազորած մարմնի և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի համատեղ սահմանած կարգով բանկերի, վարկային կազմակերպությունների, ապահովագրական ընկերությունների և արժեթղթերի շուկայի մասնագիտացված անձանց ակտիվների և (կամ) ինվեստիցիոն արժեթղթերի հնարավոր կորուստների պահուստներին ուղղված գումարները, ինչպես նաև կեղծ թղթադրամների և վճարային փաստաթղթերի պատճառով կրած կորուստները:

2. Ռեզիդենտ ապահովագրական ընկերությունների համար հարկման բազայի որոշման նպատակով համախառն եկամտից նվազեցվում են նաև ապահովագրական և վերաապահովագրական հատուցումները, ապահովագրական ընկերությունների տեխնիկական պահուստների, տեխնիկական պահուստներում վերաապահովագրողի մասնաբաժնի գծով կատարվող ծախսերը:»:

Հոդված 4. Օրենսգրքի 147-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել նոր 4.1-ին կետով.

«4.1. բանկերի կամ վարկային կազմակերպությունների միջոցով ստացված գումարները, որոնք բանկերը կամ վարկային կազմակերպություններն ստացել են որպես ապահովագրական հատուցում, որոնց մասով բանկը կամ վարկային կազմակերպությունը հանդիսանում է շահառու՝ այն մասով, որ մասով այդ գումարները ապահովագրության պայմանագրի համաձայն՝ բանկերի կամ վարկային կազմակերպությունների կողմից տրամադրվում են վարկառու կամ գրավատու ֆիզիկական անձին կամ ուղղվում են վարկառու ֆիզիկական անձի վարկի մարմանը:»:

Հոդված 5. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, բացառությամբ սույն օրենքի 1-ին և 2-րդ հոդվածների: Սույն օրենքի 1-ին և 2-րդ հոդվածներն ուժի մեջ են մտնում սույն օրենքի պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում 2018 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՆԲԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՆԱԳՐԲՈՒՄ
ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՓՈՓՈԽՈՒՄՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2016 թվականի հոկտեմբերի 4-ի ~~հարկային~~ հարկային օրենսգրքի (այսուհետ՝ «Օրենսգիրք») 108-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել նոր 21-րդ կետով.

«21) բանկերի կամ վարկային կազմակերպությունների ստացած գումարները, որոնք բանկերը կամ վարկային կազմակերպություններն ստացել են որպես ապահովագրական հատուցում, որոնց մասով բանկը կամ վարկային կազմակերպությունը հանդիսանում է շահառու՝ այն մասով, որ մասով այդ գումարները ապահովագրության պայմանագրի համաձայն՝ բանկերի կամ վարկային կազմակերպությունների կողմից տրամադրվում են վարկառու կամ գրավատու ֆիզիկական և իրավաբանական անձանց կամ ուղղվում են վարկառու ֆիզիկական և իրավաբանական անձանց վարկի մարմանը:»:

Հոդված 2. Օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել նոր 16-րդ կետով.

«16) բանկերի կամ վարկային կազմակերպությունների վճարած գումարները, որոնք բանկերը կամ վարկային կազմակերպություններն ստացել են որպես ապահովագրական հատուցում, որոնց մասով բանկը կամ վարկային կազմակերպությունը հանդիսանում է շահառու՝ այն մասով, որ մասով այդ գումարները ապահովագրության պայմանագրի համաձայն՝ բանկերի կամ վարկային կազմակերպությունների կողմից տրամադրվում են վարկառու կամ գրավատու ֆիզիկական և իրավաբանական անձանց կամ ուղղվում են վարկառու ֆիզիկական և իրավաբանական անձանց վարկի մարմանը:»:

Հոդված 3. Օրենսգրքի 124-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ.

«Հոդված 124. Բանկերի, վարկային կազմակերպությունների, ապահովագրական ընկերությունների և արժեթղթերի շուկայի մասնագիտացված անձանց հարկման բազայի որոշման նպատակով համախառն եկամտից կատարվող այլ նվազեցումները

3. Ուեզիդենտ կազմակերպություն համարվող բանկերի, վարկային կազմակերպությունների, ապահովագրական ընկերությունների և արժեթղթերի շուկայի մասնագիտացված անձանց հարկման բազայի որոշման նպատակով համախառն եկամտից նվազեցվում են նաև կառավարության լիազորած մարմնի և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի համատեղ սահմանած կարգով բանկերի, վարկային կազմակերպությունների, ապահովագրական ընկերությունների և արժեթղթերի շուկայի մասնագիտացված անձանց ակտիվների և (կամ) ինվեստիցիոն արժեթղթերի հնարավոր կորուստների պահուստներին ուղղված գումարները, ինչպես նաև կեղծ թղթադրամների և վճարային փաստաթղթերի պատճառով կրած կորուստները:

4. Ուեզիդենտ ապահովագրական ընկերությունների համար հարկման բազայի որոշման նպատակով համախառն եկամտից նվազեցվում են նաև ապահովագրական և վերաապահովագրական հատուցումները, ապահովագրական ընկերությունների տեխնիկական պահուստների, տեխնիկական պահուստներում վերաապահովագրողի մասնաբաժնի գծով կատարվող ծախսերը:»:

Հոդված 4. Օրենսգրքի 147-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել նոր 4.1-ին կետով.

«4.1. բանկերի կամ վարկային կազմակերպությունների միջոցով ստացված գումարները, որոնք բանկերը կամ վարկային կազմակերպություններն ստացել են որպես ~~ապահովագրական~~ ապահովագրական հատուցում, որոնց մասով բանկը կամ վարկային կազմակերպությունը ~~հանդիսանում է~~ հանդիսանում է շահառու, ~~իսկ ֆիզիկական անձը՝ ապահովագրող~~ (այն մասով, որ մասով այդ ~~թվում, եթե~~ թվում, եթե գումարները ~~ապահովագրության պայմանագրի համաձայն՝~~ ապահովագրության պայմանագրի համաձայն՝ բանկերի ~~եկամ~~ եկամ վարկային կազմակերպությունների կողմից ~~անմիջապես~~ անմիջապես տրամադրվում են վարկառու կամ գրավատու ֆիզիկական անձին կամ ուղղվում են ~~ֆիզիկական վարկառու ֆիզիկական անձի վարկի մարմանը, որի մասով առկա է ապահովագրության պայմանագիր):»:~~ »:

Հոդված 25. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը ~~հաջորդող~~ հաջորդող օրվանից:

, բացառությամբ սույն օրենքի 1-ին և 2-րդ հոդվածների: Սույն օրենքի 1-ին և 2-րդ հոդվածներն ուժի մեջ են մտնում սույն օրենքի պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում 2018 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ
ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՍԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍՈՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (N-298) ԿԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

Առաջարկի հեղինակը	Նախագծի հոդվածը	Առաջարկը	Հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Հանձնաժողովի որոշումը
պատգամավոր Մանե Թանդիլյան	Նոր հոդված	Առաջարկվում է նախագծի կարգավորման առարկա հարաբերությունները կարգավորել այնպես, որ լուծվի ոչ միայն վարկառուներին, այլ նաև գրավատուներին տրամադրվող ապահովագրական հատուցումների գծով հարկային հետևանքներ չունենալու հարցը	Ընդունվել է	Ընդունվել է
	Նոր հոդված	<p>Առաջարկվում է համապատասխան փոփոխություններ կատարել բանկերի, վարկային կազմակերպությունների, ապահովագրական ընկերությունների և արժեթղթերի շուկայի մասնագիտացված անձանց հարկման բազայի որոշման նպատակով համախառն եկամտից կատարվող այլ նվազեցումները սահմանող՝ Օրենսգրքի 124-րդ հոդվածում՝ այն շարադրելով հետևյալ նոր խմբագրությամբ.</p> <p>«Հոդված 124. Բանկերի, վարկային կազմակերպությունների, ապահովագրական ընկերությունների և արժեթղթերի շուկայի մասնագիտացված անձանց հարկման բազայի որոշման նպատակով համախառն եկամտից կատարվող այլ նվազեցումները</p> <p>1. Ռեզիդենտ կազմակերպություն համարվող բանկերի, վարկային կազմակերպությունների, ապահովագրական ընկերությունների և արժեթղթերի շուկայի մասնագիտացված անձանց հարկման բազայի որոշման նպատակով համախառն եկամտից նվազեցվում են նաև կառավարության լիազորած մարմնի և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի համատեղ սահմանած կարգով բանկերի, վարկային կազմակերպությունների, ապահովագրական ընկերությունների և արժեթղթերի շուկայի մասնագիտացված անձանց ակտիվների և</p>	Ընդունվել է	Ընդունվել է

		(կամ) ինվեստիցիոն արժեթղթերի հնարավոր կորուստների պահուստներին ուղղված գումարները, ինչպես նաև կեղծ թղթադրամների և վճարային փաստաթղթերի պատճառով կրած կորուստները: 2. Ռեզիդենտ ապահովագրական ընկերությունների համար հարկման բազայի որոշման նպատակով համախառն եկամտից նվազեցվում են նաև ապահովագրական և վերաապահովագրական հատուցումները, ապահովագրական ընկերությունների տեխնիկական պահուստների, տեխնիկական պահուստներում վերաապահովագրողի մասնաբաժնի գծով կատարվող ծախսերը:»		
Կառավարություն	Նախագծի 1-ին հոդված	Առաջարկվում օրենսգրքի 147-րդ հոդվածում կատարվող լրացումը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «4.1. բանկերի կամ վարկային կազմակերպությունների միջոցով ստացված գումարները, որոնք բանկերը կամ վարկային կազմակերպությունները ստացել են որպես ապահովագրական հատուցում, որոնց մասով բանկը կամ վարկային կազմակերպությունը հանդիսանում է շահառու՝ այն մասով, որ մասով այդ գումարները ապահովագրության պայմանագրի համաձայն՝ բանկերի կամ վարկային կազմակերպությունների կողմից տրամադրվում են վարկառու ֆիզիկական անձին կամ ուղղվում են վարկառու ֆիզիկական անձի վարկի մարմանը.»	Ընդունվել է	Ընդունվել է
	Նոր հոդված	Առաջարկվող հարաբերությունների կարգավորումը ամբողջական դարձնելու նպատակով առաջարկվում է համապատասխան լրացումներ և փոփոխություններ կատարել նաև շահութահարկի մասով: Մասնավորապես, անհրաժեշտ է լրացումներ կատարել շահութահարկով հարկման բազայի որոշման նպատակով եկամուտ և ծախս չհամարվող տարրերը սահմանող՝ օրենսգրքի 108-րդ և 112-րդ հոդվածներում. ➤ «Օրենսգրքի 108-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 21-րդ կետով. «21) բանկերի կամ վարկային կազմակերպությունների ստացած գումարները,	Ընդունվել է	Ընդունվել է

		<p>որոնք բանկերը կամ վարկային կազմակերպությունները ստացել են որպես ապահովագրական հատուցում, որոնց մասով բանկը կամ վարկային կազմակերպությունը հանդիսանում է շահառու՝ այն մասով, որ մասով այդ գումարները ապահովագրության պայմանագրի համաձայն՝ բանկերի կամ վարկային կազմակերպությունների կողմից տրամադրվում են վարկառու ֆիզիկական և իրավաբանական անձանց կամ ուղղվում են վարկառու ֆիզիկական և իրավաբանական անձանց վարկի մարմանը.»:</p> <p>➢ Օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 16-րդ կետով. «16) բանկերի կամ վարկային կազմակերպությունների վճարած գումարները, որոնք բանկերը կամ վարկային կազմակերպությունները ստացել են որպես ապահովագրական հատուցում, որոնց մասով բանկը կամ վարկային կազմակերպությունը հանդիսանում է շահառու՝ այն մասով, որ մասով այդ գումարները ապահովագրության պայմանագրի համաձայն՝ բանկերի կամ վարկային կազմակերպությունների կողմից տրամադրվում են վարկառու ֆիզիկական և իրավաբանական անձանց կամ ուղղվում են վարկառու ֆիզիկական և իրավաբանական անձանց վարկի մարմանը.»</p>		
	Նախագծի 2-րդ հոդված	Վերոնշյալ փոփոխություններով պայմանավորված՝ անհրաժեշտ է կարգավորել նաև անցումային հարաբերություններ: Այս առումով, առաջարկվում է նախագծի ուժի մեջ մտնելու հոդվածով սահմանել, որ 108-րդ և 112-րդ հոդվածներում կատարվող լրացումներն ուժի մեջ են մտնում նախագծի պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում են 2018 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա	Ընդունվել է	Ընդունվել է